

## Անվտանգության սարք

Էյչ-Էս-Բի-Սի Բանկի ինտերնետային բանկային ծառայության անվտանգության սարքի հետ կապված խնդիրների վերացման ուղեցույց  
**New PIN**



Ձեր անվտանգության սարքի համար Դուք պետք է նոր PIN կոդ ստեղծեք: Ստածեք PIN կոդ, որը բաղկացած լինի 4-8 նիշից: Խուսափեք հաջորդական կամ կրկնվող թվերի օգտագործումից, ինչպես օրինակ 1234 կամ 1111: Մուտքագրեք այդ թիվը Ձեր անվտանգության սարքի վրա և սեղմեք դեղին կոճակը:

Նշում: Եթե պատահամբ սխալ թիվ եք գրել PIN կոդը մուտքագրելիս, Դուք կարող եք օգտագործել կանաչ կոճակը մուտքագրված թիվը վերջից ջնջելու համար:

### Դեղին կոճակ

- Ձեր նոր սարքը կարգավորելու ընթացքում սեղմեք դեղին կոճակը նոր PIN կոդը մուտքագրելու համար:
- PIN կոդը մուտքագրելուց հետո, սեղմեք դեղին կոճակը գործարքի հաստատման ծածկագիր գեներացնելու համար, որն անհրաժեշտ է երրորդ անձանց փոխանցումներ կատարելիս և վճարումների համար նոր շահառուներ ավելացնելիս:

### Կանաչ կոճակ

- Սեղմած պահեք կանաչ կոճակը մի քանի վայրկյան՝ սարքը միացնելու համար
- Սեղմեք մեկ անգամ մի նիշ ջնջելու համար
- Սեղմեք և սեղմած պահեք մուտքագրված բոլոր նիշերը ջնջելու համար:
- Ձեր PIN կոդը մուտքագրելուց հետո, սեղմեք այս կոճակը մեկանգամյա անվտանգության ծածկագիր գեներացնելու համար:



## Ծածկագրերի տարատեսակներ PIN CONF



Ծածկագիրը, որը մուտքագրում եք, պետք է վերահաստատել: Վերամուտքագրեք PIN կոդը Ձեր անվտանգության սարքի վրա:

## NEW PIN CONF HSBC



Ձեզ հաջողվել է մուտքագրել PIN կոդը: Այժմ դուք կարող եք օգտագործել Ձեր անվտանգության սարքը անվտանգության ծածկագիր գեներացնելու համար:

## Fail PIN



Վերահաստատման ժամանակ մուտքագրված PIN կոդը չի համապատասխանում առաջին անգամ մուտքագրված PIN կոդի հետ: Սեղմեք դեղին կոճակը և կրկնեք PIN կոդը մուտքագրելու քայլերը:

### Քայլ 1

Դուք կտեսնեք այս նշանը PIN կոդը առաջին անգամ սխալ մուտքագրելիս, եթե երկու մուտքագրումները չեն համապատասխանում իրար:

### Քայլ 2

Սեղմեք կանաչ կամ դեղին կոճակը՝ վերադառնալու PIN կոդի մուտքագրման փուլ, և նորից երկու անգամ մուտքագրեք PIN կոդը, ուշադրություն դարձնելով, որ երկու մուտքագրումները համապատասխանեն իրար:



## PIN not Safe (PIN կողը ապահով չէ)



Նոր PIN կողը ապահով չէ և այն կարելի է կռահել: Մուտքագրեք ևս մեկ PIN կոդ: PIN կոդը պետք է բաղկացած լինի չորսից ութ նիշից և չպետք է պարունակի հաջորդական կամ կրկնվող թվեր: Օրինակ, պետք է խուսափեք օգտագործել 1234 կամ 1111 թվեր համակցությունից:

Եթե մուտքագրել եք մի PIN կոդը, և էկրանին հայտնվել է «Not SAFE» գրությունը, այդ դեպքում պետք է մեկ այլ PIN կոդ ընտրեք: Ձեր անվտանգության սարքը ավտոմատ կերպով կվերադառնա PIN կոդի մուտքագրման փուլ:

## Fail 1, 2 or 3 (Ձախողում 1, 2 կամ 3)



Եթե մուտքագրել եք սխալ PIN կոդ, էկրանին կհայտնվի «Fail 1» գրությունը, որը նշանակում է «Ձախողում 1»: Սեղմեք կանաչ կոճակը և նորից մուտքագրեք Ձեր PIN կոդը:

Դուք ունեք PIN կոդը ձիշտ մուտքագրելու երեք հնարավորություն:



Եթե անջատեք և նորից միացնեք սարքը, միևնույն է, PIN կոդը սխալ մուտքագրելու ձախողված փորձերը չեն վերանում:

Երրորդ ձախողված փորձից հետո («Fail 3»- Ձախողում 3), սարքը կբլոկավորվի: Սեղմեք հաջորդ պատկերը ավելին իմանալու համար:

## PIN



Մուտքագրեք PIN կոդը: Պատկերված գծիկների քանակը համապատասխանում է Ձեր PIN կոդի նիշերի քանակին:

## HSBC



Սա ողջունող գրություն է, որին կհանդիպեք, երբ Ձեր PIN կոդը ընդունվի սարքի կողմից: Սեղմեք կանաչ կոճակը անվտանգության ծածկագիր գեներացնելու համար:

## PIN FAIL 1



Մուտքագրված PIN կոդը սխալ է: Սեղմեք կանաչ կոճակը, սակայն սեղմած մի պահեք այն, վերադառնալու համար PIN կոդի մուտքագրման փուլ: Այստեղ Դուք պետք է նորից մուտքագրեք PIN կոդը:

## PIN FAIL 2



Մուտքագրված PIN կոդը սխալ է: Սեղմեք կանաչ կոճակը, սակայն սեղմած մի պահեք այն, վերադառնալու համար PIN կոդի մուտքագրման փուլ: Այստեղ նորից պետք է մուտքագրեք PIN կոդը: Ֆինանսական գեղձարարությունից Ձեզ պաշտպանելու համար անվտանգության սարքը կբլոկավորվի PIN կոդի մուտքագրման երեք անհաջող փորձից հետո:

### PIN FAIL 3



Մուտքագրված PIN կոդը սխալ է: Անվտանգության սարքը բլոկավորվել է, և պետք է վերականգնեք այն: Դա անելու համար մուտք գործեք ինտերնետային բանկային համակարգ: Հաջորդ քայլում սեղմեք «Մոռացել եք Ձեր անվտանգության սարքի PIN կոդը» հղումը, որը զետեղված է «Գեներացրեք և մուտքագրեք 6 նիշից բաղկացած անվտանգության ծածկագիրը» դաշտի տակ: Այնուհետև հետևեք հետագա հրահանգներին:

### Lock PIN



Էյչ-Էս-Բի-Սի Բանկի կողմից տրված անվտանգության սարքը բլոկավորվել է: Ինտերնետային բանկային ծառայությունից օգտվելու համար Դուք պետք է ապաբլոկավորեք այն՝ գեներացնելով վերականգնման/փոփոխման ծածկագիր: Դա անելու համար.

1. Մուտք գործեք ինտերնետային բանկային համակարգ
2. Հաջորդող էկրանին սեղմեք «Մոռացել եք Ձեր անվտանգության սարքի PIN կոդը» հղումը, որը զետեղված է «Գեներացրեք և
3. Հետևեք հետագա հրահանգներին:


Երբ արդեն ունենաք վերականգնման ծածկագիրը, սեղմեք կանաչ կոճակը, սակայն սեղմած մի պահեք այն: Ձեզ կտեղեկացվի վերականգնման ծածկագիրը մուտքագրելու մասին:

Եթե Ձեր սարքը բլոկավորվել է, սարքը միացնելիս էկրանին կհայտնվի յոթանիշ ծածկագիր: Դա բլոկավորման ծածկագիրն է:

Դուք կարող եք վերականգնել Ձեր PIN կոդը ինտերնետային բանկային ծառայության միջոցով՝ մուտքագրելով Ձեր օգտագործողի անունը, որը կփոխադրի Ձեզ հաջորդ էջ, որտեղ պետք է ընտրեք «Մոռացել եք Ձեր անվտանգության սարքի PIN կոդը» հղումը:



Անվտանգության 2 հարցերի պատասխանները տրամադրելուց հետո Ձեզնից կպահանջվի մուտքագրել բլոկավորման ծածկագիրը, որից հետո Ձեզ կտրվի PIN կոդի վերականգնման ծածկագիրը:



Կանաչ կոճակ

Մուտքագրեք PIN կոդի վերականգնման ծածկագիրը Ձեր անվտանգության սարքի վրա և սեղմեք կանաչ կոճակը Ձեր ծածկագիրը վերականգնելու համար:

## Ծածկագրի տարատեսակներ

### Բլոկավորման PIN



Մուտքագրեք Ձեր յոթանիշ PIN կոդի վերականգնման ծածկագիրը: Այն ճիշտ մուտքագրելուց հետո Ձեզ կտեղեկացվի նոր PIN մուտքագրելու մասին:

### Վերականգնման PIN



Եթե PIN կոդի վերականգնման ծածկագիրը սխալ է մուտքագրվում, էկրանին կհայտնվի «Fail 1» գրությունը: PIN կոդի վերականգնման ծածկագիրը երեք անգամ սխալ մուտքագրելու դեպքում սարքի էկրանը կանշարժանա, որի վրա պատկերված կլինի «Fail 3» գրությունը:

## Ծածկագրի տարատեսակներ

LOCK PIN

FAIL 1



PIN կոդի վերականգնման ծածկագիրը սխալ է մուտքագրված: Սեղմեք կանաչ կոճակը, սակայն սեղմած մի պահեք այն, և նորից մուտքագրեք PIN կոդի վերականգնման ծածկագիրը: Համոզվեք, որ վերականգնման ծածկագիրը մուտքագրում եք ճիշտ այնպես, ինչպես պատկերված է էկրանին:

LOCK PIN

FAIL 2



PIN կոդի վերականգնման ծածկագիրը սխալ է մուտքագրված: Սեղմեք կանաչ կոճակը, սակայն սեղմած մի պահեք այն, և նորից մուտքագրեք PIN կոդի վերականգնման ծածկագիրը: Համոզվեք, որ վերականգնման ծածկագիրը մուտքագրում եք ճիշտ այնպես, ինչպես պատկերված է էկրանին:

Նշում: Ֆինանսական զեղծարարությունից Ձեզ պաշտպանելու համար անվտանգության սարքը կբլոկավորվի մուտքագրման երեք անհաջող փորձից հետո:

LOCK PIN

FAIL 3



PIN կոդի վերականգնման ծածկագիրը սխալ է մուտքագրված երրորդ անգամ և անվտանգության սարքը ժամանակավորապես բլոկավորված է: Այս գրությունը կպահպանվի անվտանգության սարքի էկրանին մինչև ավտոմատ անջատման ժամանակի սպառումը, որից հետո սարքը ավտոմատ կերպով կանջատվի:



Երբ անվտանգության սարքը նորից միացվի, սարքի էկրանին կհայտնվի «LOCK PIN» գրությունը և յոթանիշ մի թիվ:

Սեղմեք կանաչ կոճակը, սակայն այն սեղմած մի պահեք, և նորից մուտքագրեք PIN կոդի վերականգնման ծածկագիրը: Համոզվեք, որ ճշտությամբ մուտքագրում եք այն, ինչ պատկերված է էկրանին:

#### LOCK NEW PIN



Անվտանգության սարքը ապաբլոկավորված է և անհրաժեշտ է նոր PIN մուտքագրել: Մտածեք մի PIN, որը բաղկացած լինի 4-8 նիշից: Խուսափեք հաջորդական կամ կրկնվող թվերի օգտագործումից, ինչպես, օրինակ 1234 կամ 1111: Մուտքագրեք այդ թիվը Ձեր անվտանգության սարքի վրա և սեղմեք դեղին կոճակը:

Նշում: Եթե PIN կոդը սխալ է մուտքագրված, կանաչ կոճակի օգնությամբ վերջից մեկ առ մեկ կարող եք ջնջել թվերը:

#### LOCK PIN CONF



PIN կոդը, որը ցանկանում եք մուտքագրել, պետք է հաստատվի: Խնդրում ենք վերամուտքագրել Ձեր ընտրած PIN կոդը:

#### LOCK FAIL PIN



Վերահաստատման համար մուտքագրված PIN կոդը չի համապատասխանում առաջին մուտքագրմանը: Սեղմեք դեղին կոճակը և կրկնեք համապատասխան քայլերը PIN կոդը մուտքագրելու համար:





LOCK NEW  
PIN NOT  
SAFE



Նոր մուտքագրված PIN կոդը ապահով չէ, և այն կարելի է հեշտ կռահել: Խնդրում ենք մուտքագրել մեկ այլ PIN և խուսափեք հաջորդական կամ կրկնվող թվերի օգտագործումից, ինչպես, օրինակ՝ 1234 կամ 1111:

### Button



Ձեր անվտանգության սարքի կոճակներից որևէ մեկը երկար ժամանակ սեղմված է մնացել: Մարտկոցի էներգիայի խնայելու համար Ձեր անվտանգության սարքը ավտոմատ կերպով կանջատվի:

Սարքը նորից միացրեք, մուտքագրեք Ձեր PIN կոդը և շարունակեք Ձեր գործը:

Եթե որևէ կոճակ յոթ վայրկյանից ավելի սեղմած պահեք, սարքը կանջատվի մարտկոցի էներգիան խնայելու համար:

### Battery





Սա տեղեկացնում է մարտկոցի էներգիայի սպառման մասին:

Այդ պարագայում ամեն անգամ սարքը միացնելիս այս գրությունը էկրանի վրա պահպանվում է երկու վայրկյան: Երկու վայրկյանից հետո սարքը սկսում է նորմալ գործել:

**bAtt 2:**

Մնացել է 2 ամիս:

**bAtt 1:**

Մնացել է 1 ամիս:

**bAtt 0:**

Անհրաժեշտ է փոխել սարքը:

Խնդրում ենք զանգահարել +374 (60) 655 444 հեռախոսահամարով, որպեսզի փոխարինող սարքը ուղարկվի Ձեզ:

## Ծածկագրի տարատեսակներ

**bAtt 2**



Մարտկոցի էներգիան սպառվում է: Մի՛ անհանգստացեք, մոտավորապես դեռ երկու ամիս այն կարող էք օգտագործել:

Դուք կարող եք փոխարինող անվտանգության սարք պատվիրել՝ կապ հաստատելով մեր ինտերնետային բանկային ծառայության սպասարկման կենտրոնի հետ +374 (60) 655 444 հեռախոսահամարով:

Անվտանգության և սպասարկման որակը բարձրացնելու նկատառումներից ելնելով զանգերը կարող են հսկվել և/կամ ձայնագրվել:

**bAtt 1**



Մարտկոցի էներգիան սպառվում է: Մի՛ անհանգստացեք, մոտավորապես դեռ մեկ ամիս այն կարող էք օգտագործել:

Դուք կարող եք փոխարինող անվտանգության սարք պատվիրել՝ կապ հաստատելով մեր ինտերնետային բանկային ծառայության սպասարկման կենտրոնի հետ +374 (60) 655 444 հեռախոսահամարով:



bAtt 0



Մարտկոցի էներգիան խիստ նվազել է: Այն հասել է նվազագույն սահմանին և հնարավորին չափ շուտ պետք է փոխարինող անվտանգության սարք պատվիրեք:  
Դուք կարող եք փոխարինող անվտանգության սարք պատվիրել՝ կապ հաստատելով մեր ինտերնետային բանկային ծառայության սպասարկման կենտրոնի հետ +374 (60) 655 444 հեռախոսահամարով:

Թարմացվել է՝ 22/09/2015 15:00